

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՂԱՐԻՔՅԱՆ ԳՈՐԱՐ ԳԵՎՈՐԳԻ

**ԱԿՐՈՔԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՅԼ
ՏԵՄՆՈՂ ԵՐԵՆԱՆԵՐԻ ՏԵՍՈՂԱԿԱՆ
ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԻ ՎՐԱ**

ԺԳ. 00. 02- Դասավանդման և դաստիարակության
մեթոդիկա (Ֆիզիկական կուլտուրա) մասնագիտությամբ
մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան - 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռ.Ն.Ազարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Ֆ.Գ. Ղազարյան

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Բ. Լ. Երիցյան

Առաջատար կազմակերպություն

Վանաձորի Դ. Թումանյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2015 թ. մարտի 12-ին ժամը 12-ին Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ԲՈՂ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թ.-ի փետրվարի 12-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝



Ա.Ղ.Սվաջյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հետազոտության արդիականությունը: Դպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակությունը ընդհանուր դաստիարակության համակարգի, ինքնուրույն կյանքի նախապատրաստման և ակտիվ աշխատանքային գործունեության հիմնական մասերից է (Б.А. Ашмарин, 1978; Ф.Г. Казарян, 1992; Р.Н. Азарян, 2008; А.С. Грачев, 2013 և այլք):

Ֆիզիկական դաստիարակությունը ներառված է կրթական համակարգի բոլոր ծրագրերում՝ անկախ երեխաների առողջական վիճակից և հոգեֆիզիկական զարգացման մակարդակից: Սակայն, սահմանափակ հնարավորություններով, այդ թվում նաև տեսողության խանգարումով երեխաների ֆիզիկական դաստիարակությունն ունի իր առանձնահատկությունները: Ֆիզիկական շատ վարժություններ, խաղեր, մարզածներ նույնիսկ հակացուցված են այս երեխաներին (բռնցքամարտ, ծանրամարտ, ըմբշամարտ, ֆուտբոլ և այլն): Առանձին մարմնամարզական, աթլետիկական, շարժախաղերի և սեղանի թենիսի վարժություններ հասանելի են այդ երեխաներին, սակայն որոշ դեպքերում ունեն կատարման որոշակի սահմանափակումներ (Р.Н. Азарян, 1990; Д.М. Малаев, 1995; Ս.Ս.Ղուկասյան, Վ.Ս.Սամաջանյան, 2008, Г.Г.Антоян, 2014 և այլք):

Նման իրավիճակը հանգեցնում է նրան, որ դպրոցականների գերակշռող մասը ակտիվորեն չեն զբաղվում ֆիզիկական վարժություններով, ինչն էլ դառնում է նրանց առողջության վատացման, թույլ ֆիզիկական զարգացման և շարժողական պատրաստվածության պատճառ: Խանգարվում է այս երեխաների կենցածքը, քայլվածքը, շարժումների արագությունը և ճշգրտությունը, տարածության մեջ կողմնորոշումը, կոորդինացիան և այլն (В.Ф. Афанасьев, 1971; В.А. Кручинин, 1972; А.Ф. Касаткин, 1980; Р.Н. Азарян, 1990; Р.Т. Сафарян, 2009 և այլք):

Եթե սպորտային մարմնամարզության, աթլետիկայի, սեղանի թենիսի, շարժախաղերում առկա են որոշակի մշակումներ տեսողության խանգարումով երեխաների ֆիզիկական դաստիարակության կատարելագործման վերաբերյալ (Р.Н. Азарян, 1974; Е.В. Начинова, 1987; Д.М. Малаев, 1983; Г.Г. Антоян, 2008; Ս.Վ.Մուրադյան 2014 և այլք), ապա ակրոբատիկայում նմանատիպ հետազոտություններ չկան:

Մինչ այսօր գիտամեթոդական գրականության մեջ և գործնականում որոշված չեն ակրոբատիկական վարժությունների նշանակությունը և կարևորությունը տեսողության խանգարումով երեխաների համար: Հաստատված չեն, թե ակրոբատիկական վարժությունների որ տեսակներն են հակացուցված նրանց, ինչպես նաև մշակված չէ նախապատրաստական և ակրոբատիկայի տարրերով ուղեկցող վարժությունների ընտրության և կիրառման մեթոդիկան: Ընդանրապես ուսումնասիրված չեն տեսողության խանգարումներով երեխաների ակրոբատիկայի պարապմունքների ձևերը և բնույթը, ակրոբատիկական վարժությունների ազդեցությունը թույլ տեսող երեխաների տեսողության վիճակի և տեսողական գործառնությունների վրա:

Այս հիմնախնդրի լուծմանն է ուղղված սույն աշխատանքը, որն էլ որոշում է հետազոտության արդիականությունը:

Հետազոտության արդիականությունը որոշվում է նաև նրանով, որ տեսողության խանգարումով երեխաների ֆիզիկական կուլտուրայի

դպրոցական ծրագրում կիրառվող ակրոբատիկական վարժությունների ուսուցման մոտեցումները հաճախ լինում են ոչ արդյունավետ: Նախ և առաջ երեխաները ծրագրում նախատեսված վարժություններից մի քանիսն են կատարում, չեն կիրառվում զույգերով հավասարակշռության, խմբային վարժություններ այն դեպքում, երբ ակրոբատիկական վարժությունների հենց այդ տեսակներն են հասանելի տեսողության խանգարումով երեխաներին: Երկրորդ հերթին, մշակված չեն նախապատրաստական, ուղեկցող և հատուկ վարժություններ այս երեխաներին մշակված ակրոբատիկական վարժությունների ուսուցման համար: Այդ իսկ պատճառով մանկավարժական մոտեցումների, պայմանների և մեթոդիկայի մշակումն ու դրանց արդյունավետության փորձարարորեն հիմնավորումը ակրոբատիկական տարրերով ֆիզիկական կուլտուրայի դասաժամերին՝ հանդիսանում է խիստ արդիական, տեսական և գործնական նշանակալի:

Հիմնախնդրի մշակվածության աստիճանը: Տեսողության խանգարումներով երեխաների ֆիզիկական դաստիարակությանն են նվիրված Վ.Ֆ.Աֆանասևի (1971), Բ.Վ.Սերմեևի (1973-1983), Ռ.Ն.Ագարյանի (1974-2014), Դ.Ս.Մալևսկի (1985-2000), Մ.Ա.Միշինի (2003-2007), Ռ.Տ.Սաֆարյանի (2005-2009), Ս.Վ.Մուրադյանի, (2009-2014), Գ.Յ.Անտոնյանի (2010-2014) և այլոց մի շարք աշխատանքներ: Նշված և այլ աշխատություններում բացահայտվում են չտեսնող և թույլ տեսնող դպրոցականների հետ տարվող սպորտային մարմնամարզության, աթլետիկայի, լողի, սեղանի թենիսի, շարժախաղերի, ֆիզիկական դաստիարակության ուղղությամբ առարկայական և արտադասարանական պարապմունքներում կիրառվող միջոցների կարևորությունն ու արդյունավետությունը: Սակայն մինչ օրս գիտամեթոդական գրականության մեջ և գործնականում որոշված չեն թույլ տեսնող երեխաների ֆիզիկական դաստիարակության համակարգում ակրոբատիկական վարժությունների դերը և կարևորությունը. տեսականորեն և փորձարարությամբ հիմնավորված չէ ֆիզիկական դաստիարակության առարկայական և արտադասարանական պարապմունքների ժամանակ ակրոբատիկական վարժությունների կիրառման հնարավորությունները և նպատակաուղղվածությունը: Մենք հիմնավորել ենք, որ թույլ տեսնող երեխաների հետ իրականացվող ակրոբատիկական վարժություններով պարապմունքների համար մանկավարժական մոտեցումների, միջոցների, մեթոդների մշակումը և հատուկ պայմանների ստեղծումը կնպաստեն նրանց առողջության ամրապնդմանը, շարժողական ընդունակությունների զարգացմանը և բարոյականային որակների դաստիարակմանը:

Հետազոտության օբյեկտը թույլ տեսնող կրտսեր դպրոցականների հետ ակրոբատիկական վարժություններով պարապմունքների անցկացման գործընթացն է:

Հետազոտության առարկան թույլ տեսնող դպրոցականների հետ ֆիզիկական կուլտուրայի դասաժամերին ակրոբատիկական վարժությունների կիրառման բովանդակությունն է, պայմանները և մանկավարժական մոտեցումները:

Հետազոտության վարկածը: Մենք ենթադրում ենք, որ ակրոբատիկական պարապմունքների ազդեցությունը թույլ տեսնող երեխաների տեսողական գործառնությունների վրա ուսումնասիրումը կնպաստի՝

- ակրոբատիկական պարապմունքների արդյունքում թույլ տեսնող երեխաների տեսողական վիճակի և տեսողական գործառույթների (կենտրոնական տեսողություն, տեսադաշտ, տեսողական ընկալում և այլն) փոփոխությունների բացահայտմանը,

- ակրոբատիկական պարապմունքների արդյունքում թույլ տեսնող երեխաների շարժողական հնարավորությունների ցուցանիշների փոփոխության բացահայտմանը,

- թույլ տեսնող կրտսեր դպրոցականների հետ անցկացվող ակրոբատիկական պարապմունքների արդյունավետության որոշմանը:

Ղետազոտության նպատակն է ուսումնասիրել ակրոբատիկական վարժություններով պարապմունքների ազդեցությունը թույլ տեսնող կրտսեր դպրոցականների տեսողական գործառույթների վրա:

Նպատակը, օբյեկտը, առարկան և աշխատանքային վարկածը որոշել են հետազոտության **խնդիրները**

1. ուսումնասիրել թույլ տեսնող դպրոցականների հետ ակրոբատիկական պարապմունքների կազմակերպման և անցկացման ժամանակակից մոտեցումները,

2. ուսումնասիրել դպրոցական ծրագրում ընդգրկված ակրոբատիկական վարժությունների ազդեցությունը թույլ տեսնող կրտսեր դպրոցականների տեսողության վիճակի վրա,

3. փորձարարորեն հիմնավորել թույլ տեսնող դպրոցականների հետ անցկացվող ակրոբատիկական վարժություններով պարապմունքների հնարավորությունները և նպատակաուղղվածությունը:

Ղետազոտության տեսական ու մեթոդաբանական հիմքն են հանդիսացել գործողությունների և հասկացությունների փուլային ձևավորման տեսությունը (Ռ.Բ.Գալեոբսի, 1977), զարգացնող ուսուցման տեսությունը (Յ.Յ.Դաօնոօօ, 1996; Մ.Ա. Մկրտչյան, 2013), համակարգային մոտեցման տեսությունը (Յ.Գ.Կոչման, 1998), ինչպես նաև ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի հայեցակարգային դրույթները (Ա.Ռ.Մամբեև, 1991, Ֆ.Գ.Ղազարյան, 1992, Մ.Ե. Կրպեև, 2011), տեսողության խանգարումներով երեխաների ֆիզիկական դաստիարակության տեսությունը (Ե.Յ.Շերմեև, 1987; Դ.Մ.Մալաև, 1995; Ք.Մ.Ազարյան, 2012):

Առաջադրված խնդիրների լուծման համար կիրառվել են հետազոտության հետևյալ **մեթոդները**.

- մասնագիտական գրականության վերլուծություն և տեսական ընդհանրացում,

- ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների աշխատանքի առաջատար փորձի վերլուծություն,

- փորձարկվողների բժշկական փաստաթղթերի ուսումնասիրություն և վերլուծություն,

- հոգեբանամանկավարժական հետազոտության մեթոդներ՝ դիտում, հարցում, զրույց, անկետավորում,

- փորձարկվողների ֆիզիկական պատրաստվածության ստուգողական փորձարկում և թեստավորում,

- բժշկական հետազոտության մեթոդներ՝ տեսողական գործառնությունների որոշում՝ կենտրոնական տեսողություն, տեսադաշտ, աչքի ներակնային ճնշում և այլն (բժշկի հետ համատեղ),

- հետազոտության փորձարարական մեթոդներ,
- փորձարարական ուսուցում,
- մաթեմատիկական վիճակագրական մեթոդ:

Ատենախոսության գիտական նորույթն է.

- բացահայտվել է դպրոցական ծրագրի ակրոբատիկական վարժությունների ազդեցությունը թույլ տեսնող դպրոցականների տեսողության վիճակի վրա,

- մշակվել է հատուկ միջոցներ, մեթոդներ և դրանց կիրառման պայմաններ, թույլ տեսնող կրտսեր դպրոցականների ակրոբատիկական պարապմունքների կազմակերպման և անցկացման համար,

- փորձարարությամբ հիմնավորվել է ակրոբատիկական պարապմունքների դրական ազդեցությունը թույլ տեսնող երեխաների տեսողության գործառնությունների վրա:

- մշակվել և տեղայնացվել են հատուկ ակրոբատիկական վարժություններ, և փորձարարական ուսուցման ընթացքում հիմնավորվել են դրանց արդյունավետությունը թույլ տեսնող դպրոցականների տեսողական և շարժողական համակարգերի բարելավման վրա:

Հետազոտության տեսական նշանակությունը որոշվում է թույլ տեսնող կրտսեր դպրոցականների ֆիզիկական դաստիարակության դրվածքի տեսական վերլուծության, ակրոբատիկական պարապմունքների կազմակերպման և անցկացման, առաջարկված միջոցների, մեթոդների և դրանց կիրառման պայմանների, ինչպես նաև ստացված արդյունքների տեսական հիմնավորմամբ:

Աշխատանքի տեսական նշանակությունը կարևորվում է նաև նրանում, որ հետազոտության նյութերը նոր տվյալներով կլրացնեն տեսողության խանգարումներով երեխաների ֆիզիկական դաստիարակության տեսությունն ու մեթոդիկան:

Հետազոտության գործնական նշանակությունը որոշվում է ակրոբատիկական վարժություններով պարապմունքներին թույլ տեսնող դպրոցականների տեսողության վիճակի վրա ունեցած ազդեցությամբ, ինչպես նաև ֆիզիկական կուլտուրայի դասերին ակրոբատիկական վարժությունների կիրառման միջոցների, մեթոդների և պայմանների մշակմամբ և գործնականում ներդրմամբ:

Գործնական նշանակությունը որոշվում է նաև թույլ տեսնող երեխաների տեսողության գործառնությունների վրա ակրոբատիկական վարժությունների դրական ազդեցության փորձարարության ուսումնասիրմամբ, ինչպես նաև հատուկ միջոցների, մեթոդների և դրանց կիրառման պայմանների մշակմամբ և գործնականում ներդրմամբ:

Պաշտպանությանն են ներկայացվում հետևյալ դրույթները՝

1. Թույլ տեսնող երեխաների հետ ակրոբատիկական վարժություններով պարապմունքների բովանդակությունը, միջոցները, մեթոդները և դրանց կիրառման պայմանները, որպես ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի (ԱՖԿ) ուղղություն:

2. Ակրոբատիկական վարժություններով պարապմունքները դրական ազդեցություն են թողնում թույլ տեսնող կրտսեր դպրոցականների տեսողական, գործառույթների վրա, և նախադրյալ է հանդիսանում ընդլայնելու այդ երեխաների շարժողական պատրաստվածության մակարդակը:

Յետազոտական աշխատանքը կազմակերպվել է միմյանց փոխկապակցված 4 փուլերով.

Առաջին՝ որոնողական փուլում (2002-2005 թթ.), անցկացվել է հետազոտվող հիմնախնդրի բազմակողմանի ուսումնասիրություն և վերլուծություն:

Երկրորդ՝ փորձարարական փուլում (2005-2008 թթ.) կազմակերպվել և իրականացվել են հաստատող փորձարարություններ: Այս փուլում մշակվել են օրինակելի փաստաթղթեր՝ հաստատող փորձարարությունների արդյունքների գրանցման համար, կազմվել են հարցաթերթիկներ ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների և ֆիզիկական կուլտուրայի ավագ կուրսեցիների համար, ինչպես նաև հաստատող գիտափորձեր՝ տեսողական գործառույթների, շարժողական և ակրոբատիկական վարժությունների կատարման կարողության մշակման համար: Յետազոտության ստացված արդյունքների հիման վրա ընտրվել, մշակվել և համակարգվել են միջոցներ, մեթոդներ և պայմաններ փորձարարական ուսուցման կազմակերպման և անցկացման համար:

Երրորդ փուլում կազմակերպվել և անցկացվել է փորձարարական ուսուցում (2008-2009թթ.): Ուսումնասիրվել է ակրոբատիկական վարժություններով պարապմունքների ազդեցությունը թույլ տեսնող կրտսեր դպրոցականների տեսողական գործառույթների, ֆիզիկական զարգացման և շարժողական համակարգի վրա:

Չորրորդ փուլում ընդհանրացնող (2010-2011թթ.) անցկացվել է փորձարարական նյութի վիճակագրական մշակում, հետազոտության արդյունքների տեսական վերլուծություն և ընդհանրացում, շարադրվել է առեմախոսությունը:

Յետազոտությանը մասնակցել են 53 տեսողության խանգարումով կրտսեր դպրոցականներ, նրանցից փորձարարական ուսուցմանը մասնակցել են 21 դպրոցականներ՝ 10-ը փորձարարական և 11-ը ստուգողական խմբերում:

Սոցիոլոգիական հետազոտություններում ընդգրկված են եղել ֆիզիկական կուլտուրայի 108 ուսուցիչներ, ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի բարձր կուրսի 114 ուսանողներ և 76 թույլ տեսնող դպրոցականներ:

Յետազոտության արդյունքների հավաստիությունը և հիմնավորվածությունը ապահովված են անցկացված հետազոտության ծավալով և երկարատևությամբ, հետազոտության ժամանակակից մեթոդների կիրառմամբ, փորձարարական նյութի մանրակրկիտ վերլուծությամբ, ինչպես նաև հիմնական դրույթների, հետևությունների, արդյունքների լայն քննարկմամբ և դպրոցական պրակտիկայում դրանց ներդրմամբ:

Յետազոտության արդյունքների փորձարկումը և ներդրումը: Առեմախոսության հիմնական դրույթները, հետազոտության արդյունքները, հետևությունները և գործնական առաջարկությունները զեկուցվել և քննարկվել են ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի Յ.Յ.Շահինյանի անվան մարմնամարզության և սպորտային պարերի (2003-2010թթ.) և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի (2009-2011թթ.) ամբիոնների նիստերում, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի հատուկ մանկավարժության և

հոգեբանության ամբիոնի միատուն (2014 թ), ինչպես նաև Երևան քաղաքի տեսողության խանգարումներ ունեցող երեխաների N14 հատուկ դպրոցի մանկավարժական խորհուրդում (2008-2011 թթ.):

Աշխատանքի թեմայով հրատարակվել է 5 հոդված:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը շարադրված է 185 համակարգչային էջով, կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության մատենագիտական ցանկից և հավելվածից:

Ատենախոսության բնագրում ներկայացված է 18 աղյուսակ, 24 նկար և 8 հավելված:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ցույց է տրված հիմնախնդրի մշակվածության աստիճանը, ներկայացված են հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը, վարկածը, նպատակին հասնելու համար լուծված խնդիրները, տեսական և մեթոդաբանական հիմքը, մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները, հետազոտության փորձարարական հիմքը:

Ատենախոսության առաջին՝ «Հարցի դրվածքը տեսությունում և գործնականում» գլխում ներկայացված են վերլուծիչների փոխկապակցվածությունը և դրանց համակարգային գործունեությունը՝ որպես տեսողության խանգարումով երեխաների շարժումների ձևավորման հիմք, ինչպես նաև նշվում է ակորբատիկական վարժությունների նշանակությունը՝ որպես ֆիզիկական դաստիարակության կարևոր միջոց, բացահայտվում է հետազոտության տեսանկյան հիմնավորումը, խնդիրները, մեթոդները և կազմակերպումը:

Տեսողական և շարժողական վերլուծիչների համակարգային փոխներգործությանն ուշադրություն են դարձրել մի շարք հեղինակներ: Այսպես, Կ.Խ.Կելչեևը /1940/ իր հոդվածներում նշել է, որ մկանային աշխատանքը մեծ ազդեցություն ունի տեսողության զգայունության վրա: Թեթև և կարճաժամկետ աշխատանքը բարձրացնում է զգայունությունը, իսկ երկարատև աշխատանքը՝ իջեցնում է այն: Հետևաբար, երբ մարմինն առանց ընդմիջման ենթարկվում է արտաքին և ներքին ազդակների մեծաքանակ ներգործության, աչքի տարաբնույթ համակարգերի գործառության վիճակը նույնպես ենթարկվում է այս կամ այն տիպի փոփոխության:

Բնութագրելով տեսողության խանգարումներով երեխաների ֆիզիկական զարգացումը, մի շարք հեղինակներ /Լ.Ֆ.Կասատկին, 1967; Ի.Ի.Շմելկով, 1975, 1980; Ռ.Ն.Ազարյան, 1974; Լ.Ա.Սենյոնով, 1989 և այլք/ նշում են, որ մանկական հասակում տեսողության կորուստը կամ դրա խանգարումը դանդաղեցնում է ֆիզիկական զարգացման բնական աճը: Եվ չնայած այն հանգամանքին, որ այս երեխաների ֆիզիկական զարգացման տարիքային դինամիկան հիմնականում պահպանվում է, սակայն զարգացման մակարդակը նշանակալիորեն հետ է մնում նորմայից:

Սա, բնականաբար, պարտադրում է մանկավարժներին և հետազոտողներին որոնել տեսողության խանգարումով երեխաների շարժողական ոլորտի զարգացման տարաբնույթ շեղումների շտկման և վերացման արդյունավետ միջոցներ և մեթոդներ:

Սակայն, ցավոք, գործնականում այդ դպրոցականների ֆիզիկական դաստիարակության մեջ օգտագործվում են ոչ բոլոր հնարավորությունները: Մենք կարծում ենք, որ շարժողական ոլորտի և բնավորության անհատական գծերի զարգացման խանգարումների վերացման համար նպատակահարմար է լայնորեն կիրառել ակրոբատիկայում օգտագործվող միջոցները: Ակրոբատիկական միջոցներն ու մեթոդները հնարավորություն են ընձեռում չափավորել պարապոզների ֆիզիկական բեռնվածությունը և ընտրել վարժություններ՝ ելնելով տեսողության խանգարման բնույթից և աստիճանից, ինչպես նաև յուրաքանչյուր երեխայի հնարավորություններից և հետաքրքրություններից:

Այսպիսով, ընդհանրացնելով ընդհանուր և հատուկ մանկավարժության, ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի գիտամեթոդական գրականությունը, կարելի է եզրակացնել՝

- մի կողմից ակրոբատիկական վարժությունները հանդիսանում են կարևոր միջոց տեսողության խանգարումով երեխաների ֆիզիկական դաստիարակության համակարգում, մյուս կողմից հատուկ գիտամեթոդական գրականության մեջ և գործնականում այդ վարժություններին չի ցուցաբերվում պատշաճ վերաբերմունք: Այդ վարժությունները լայն կիրառում չեն գտել ոչ դասաժամային, ոչ էլ արտադասարանական պարապմունքների ձևերում,

- փորձարարությամբ ուսումնասիրված չէ, թե ակրոբատիկական վարժություններով պարապմունքները ինչպիսի ազդեցություն են թողնում թույլ տեսնող երեխաների տեսողության և շարժողական ոլորտների վրա:

Այդ խնդիրների լուծումն էլ որոշեց մեր հետազոտության հիմնական ուղղվածությունը:

Ատենախոսության երկրորդ՝ «Դպրոցական ծրագրի ակրոբատիկական վարժությունների բնութագիրը և դրանց ազդեցությունը թույլ տեսնող դպրոցականների տեսողության սրության վրա» գլխում ներկայացված են «Ֆիզիկական կուլտուրա» ուսումնական ծրագրի մարմնամարզության բաժնի ակրոբատիկական վարժությունների վերլուծությունը, տեսողության խանգարումներով երեխաների հետ ակրոբատիկական վարժությունների ուսուցման վերաբերյալ ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների և ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի բարձր կուրսի ուսանողների իրազեկվածության մակարդակի արդյունքների վերլուծությունը, ակրոբատիկական վարժությունների նկատմամբ թույլ տեսնող դպրոցականների վերաբերմունքի ուսումնասիրությունը, ինչպես նաև ֆիզիկական կուլտուրայի դասերին ակրոբատիկական վարժությունների ազդեցության ներքո տեսողության սրության փոփոխությունները թույլ տեսնող երեխաների մոտ:

Ֆիզիկական կուլտուրայի դպրոցական ծրագրի վերլուծությունը վկայում է, որ վերջին 15 տարիների ընթացքում ակրոբատիկական վարժությունների բաժնի ուսումնական նյութը բավականին փոփոխությունների է ենթարկվել: Մասնավորապես նվազել է ակրոբատիկական վարժությունների բաժնին հատկացված ժամերի քանակը, նվազել է վարժությունների և տարրերի քանակը, գրեթե բացակայում են նախապատրաստական և ուղղորդող

վարժությունները՝ ուսուցանվող տարրերի տեխնիկայի յուրացումը հեշտացնելու համար: Ծրագրում բացակայում են զույգերով, եռյակով և փոքր խմբերով կատարվող հավասարակշռության վարժությունները, պարզ կիսաբուրգերը և բուրգերը: Այս ամենը բացասաբար է անդրադառնում մարմնամարզության բաժնի ակրոբատիկական տարրերի ողջ ուսումնական նյութի յուրացման վրա:

Վերը շարադրվածը վկայում է տեսողության խանգարումով երեխաների «Ֆիզիկական կուլտուրա» դպրոցական ծրագրի մարմնամարզության բաժնի ակրոբատիկական վարժությունների կատարելագործման անհրաժեշտության մասին:

Սոցիոլոգիական հարցման արդյունքները վկայում են, որ ֆիզիկական կուլտուրայի 108 ուսուցիչներից միայն 24.2% ունեին լիարժեք պատկերացում ֆիզիկական կուլտուրայի դասերի ժամանակ թույլ տեսնող երեխաների հետ ակրոբատիկական վարժությունների ընտրության, համակարգման և կիրառման վերաբերյալ: Իսկ ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի բարձր կուրսի ուսանողների 87.7% չունեին լիարժեք պատկերացումներ թույլ տեսնող երեխաների ակրոբատիկական պարապմունքների կազմակերպման և անցկացման առանձնահատկությունների վերաբերյալ:

Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների 48.1% և ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի բարձր կուրսի ուսանողների 50.9% դիտարկվող խնդրի վերաբերյալ չունեին համապատասխան տեսական գիտելիքներ և գործնական կարողություններ: Հարցմանը մասնակիցների մեծ մասն անկեղծորեն նշել էր, որ իրենք տեղեկացված են ակրոբատիկական վարժությունների ձևերի մասին, զնահատում են դրանց կարևորություն և նշանակությունը, սակայն թույլ տեսնող երեխաների հետ «Ֆիզիկուլտուրայի» դասերին այդ վարժությունները չեն կիրառվել: Հիմնական պատճառների շարքում նշել են հատուկ զրականության բացակայությունը, այդ երեխաների զարգացման առանձնահատկությունների, տեսողության խանգարման բնույթի և աստիճանի անբավարար իրազեկվածությունը:

Քանի որ դպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակության տեսությունում և գործնականում, ինչպես նաև մասնագիտական մանկավարժության մեջ ընդգծվում է երեխաների հետաքրքրության ուսումնասիրումը, և մանակավարժական աշխատանքում դրանց վրա հենվելու կարևորությունը /H.Г. Морозова, 1967; С.Б. Хмыров, 1973; Р.Н. Азарян 1990 и др./, մենք մեծ ուշադրություն ենք դարձրել տեսողության խանգարումով երեխաների վերաբերմունքին ուսուցանվող ակրոբատիկական վարժությունների նկատմամբ, թե որ վարժություններն են ավելի սիրով կատարվում, որոնք ոչ, կամ դժվարանում են կատարել: Սոցիոլոգիական հարցմանը մասնակցած 76 թույլ տեսնող կրտսեր դպրոցականներից 59-ը (77.6%) նշում են, որ սիրում են զբաղվել ակրոբատիկական վարժություններով, սակայն նրանց զգալի մասը (88.1%) ակրոբատիկական վարժությունները յուրացնելիս շատ պասիվ են:

Անցկացված հետազոտության արդյունքները թույլ են տալիս հաստատել, որ տեսողության խանգարումը բացասաբար է անդրադառնում թույլ տեսնող երեխաների ակրոբատիկական վարժությունների կատարման նկատմամբ հետաքրքրության ձևավորման, ակրոբատիկական վարժությունների բավարար պատկերացման, կատարման ցածր որակի վրա: Դա հանգեցնում է նրան, որ

ակրոբատիկական վարժությունների շրջանակը, որը թույլ տեսնող երեխաների կողմից սիրված է, սահմանափակվում է:

Ֆիզիկական կուլտուրայի դասերին թույլ տեսնող դպրոցականների հետ ոչ բավարար չափով ակրոբատիկական վարժությունների կատարումը մասամբ բացատրվում է նրանով, որ գործնականում ուսումնասիրված չէ, թե ակրոբատիկական վարժությունները ինչպես են ազդում այդ երեխաների տեսողության սրության և տեսողական գործառնությունների վրա, որոնք են հակուցված և որոնք կարելի է հաճախակի օգտագործել: Հաշվի առնելով վերը նշվածը մեր կողմից կազմակերպվել է հետազոտություն, որտեղ 53 թույլ տեսնող կրտսեր դպրոցականներ եռամսյա պարապմունքների ընթացքում դպրոցի ակնաբուժի հսկողության տակ կատարել են դպրոցական ծրագրի ակրոբատիկական բաժնի, ինչպես նաև մեր կողմից առաջարկված խմբային վարժություններ:

«Ֆիզիկական կուլտուրայի» դասերի ժամանակ լայնորեն կիրառվել է ակրոբատիկական խմբային վարժություններ զույգերով, եռյակով, փոքր խմբերով հավասարակշռության վարժություններ, բուրգեր, կիսաբուրգեր, որոնք հեշտ յուրացվող են և զարգացնում են մի շարք հատկություններ վճռականություն, դժվարություններ հաղթահարելու կարողություն, ճարպկություն, կոորդինացիա, շարժումների ճշգրտություն:

Հետազոտության արդյունքները վկայում են, որ 53 թույլ տեսնող դպրոցականներից ոչ մեկի մոտ տեսողության սրության վատացում չի նկատվել: 41 (77.4 %) սովորողների մոտ տեսողության սրությունը մնացել է անփոփոխ, իսկ 12-ի մոտ (22.6 %) հաստատվել է տեսողության աննշան բարելավում (աղյուսակ 1):

Անցկացված հետազոտության և ակնաբուժական զննման արդյունքները հաստատեցին, որ առաջարկվող ակրոբատիկական վարժությունների կատարումը դրականորեն է ազդում թույլ տեսնող կրտսեր դպրոցականների տեսողության սրության վրա: Հետազոտվողների ճշնող մեծամասնության մոտ այդ վարժություններով եռամսյա պարապմունքների ընթացքում տեսողության սրությունը կայունացել է և ոչ մի բացասական փոփոխություններ չեն նկատվել:

Երրորդ` «Թույլ տեսնող դպրոցականների հետ ակրոբատիկական վարժություններով պարապմունքների հնարավորությունների և նպատակահարմարության փորձարարական հիմնավորումը» գլխում ներկայացված են թույլ տեսնող դպրոցականների հետ անցկացվող արտադասարանական պարապմունքներում ներառված ակրոբատիկական վարժությունների ծավալը, բովանդակությունը, փորձարկվողների տեսողական հնարավորությունների բնութագիրը, ակրոբատիկական վարժություններով հագեցած պարբերական պարապմունքների ազդեցությունը թույլ տեսնող դպրոցականների տեսողության և տեսողական գործառնությունների զարգացման վրա, բացահայտված են ակրոբատիկական վարժություններով պարապմունքների արդյունավետությունը թույլ տեսնող դպրոցականների շարժողական ընդունակությունների և մարզական կատարելագործման զարգացման վրա:

Մանկավարժական երկամյա փորձարության տարբեր փուլերում փորձարարական խմբի թույլ տեսնող երեխաները կատարել են տարբեր ծավալի, բովանդակության և բնույթի վարժություններ` ընդհանուր ամրապնդող և ընդհանուր զարգացնող, որոնք ուղղված են ֆիզիկական զարգացման


թերութիւնների շտկմանը և շարժողական ընդունակութիւնների կատարելագործմանը, ինչպէս նաև հատուկ ընտրված ակրոբատիկական վարժութիւններ և առաջադրանքներ, ծայնային կողմնորոշիչ հարմարանքներ: Այս պարապմունքների ծրագրում ներառված են եղել վարժութիւններ և առաջադրանքներ առանց առարկաների և առարկաներով (զնդակներ, մարմնամարզական փայտեր, ցատկապարան և այլն) և տարբեր գործիքների վրա՝ մարմնամարզական նստարան, շվեդական պատ և այլն: Արտադասարանական պարապմունքների ծրագրում ընդգրկվել են ոչ բարդ ակրոբատիկական հավասարակշռության վարժութիւններ զույգերով, եռյակով, փոքր խմբերով (կիսաբուրգեր, բուրգեր): Երեխաները կատարել են ակրոբատիկական վարժութիւններ՝ որոնք իրենց կառուցվածքով պարզ են ֆիզիկական լարվածութիւն չեն պահանջում խմբավորումներ, զլորումներ, գլուխկոնծիներ և տարբեր շրջումներ և պտույտներ: Ուսուցման ընթացքում առաջին հերթին յուրացրել են հատուկ, նախապատրաստական և մոտեցնող տարրեր, որոնք նպաստել են ուսուցանվող վարժութիւն առանձին մասերի կատարմանը:

Երկամյա ակրոբատիկական պարապմունքների վերջնական փուլում ուսուցանվող առանձին տարրերից և վարժութիւններից կազմվել են պարզ ակրոբատիկական համակցութիւններ, երաժշտութիւն ուղեկցութիւնով, որոնցով փորձարկվողները հանդես են եկել ցուցադրական ելույթով՝ դպրոցականների և ուսուցիչների առջև:

Տվյալ հետազոտութիւն խնդիրն է հանդիսացել փորձարարութիւնով հիմնավորել առաջարկվող ակրոբատիկական վարժութիւնները և նրանց ազդեցութիւնը թույլ տեսնող դպրոցականների տեսողութիւն վրա:

Ակնաբուժական հետազոտութիւնների ծրագրի մեջ են մտել ներակնային ճնշման որոշումը, կենտրոնական և ծայրամասային տեսողութիւն սրութիւն և տեսողական գործառնութիւն ցուցանիշների բացասական փոփոխութիւնները: Անցկացված հետազոտութիւն արդյունքները վկայում են թույլ տեսնող երեխաների տեսողութիւն վիճակի, տեսողական գործառնութիւնների վրա ակրոբատիկական պարապմունքների անցկացման դրական ազդեցութիւն մասին: Հաստատված է, որ Ն.Տիգրանյանի անվան տեսողութիւն խանգարումով երեխաների թիվ 14 հատուկ դպրոցի ակնաբուժ Լ.Նուշիկյանի եզրակացութիւն համաձայն երկամյա մանկավարժական փորձարարութիւն ժամանակ հետազոտվող 2 խմբերում կենտրոնական տեսողութիւն սրութիւն և տեսողական գործառնութիւն ցուցանիշների բացասական փոփոխութիւններ չի նշվել: Փորձարարական խմբի 10 հետազոտվողներից 6-ի (60%) կենտրոնական տեսողութիւն սրութիւնը չի փոխվել, նշվել է նրա կայուն բնութիւն, իսկ 4-ի (40%) մոտ փորձարարական ուսուցման տարբեր փուլերում նկատվել է աննշան բարելավում: Թույլ տեսնող 4-ի (40%) երեխաների մոտ բացահայտվել է տեսադաշտի սահմանների 5-10° ընդլայնում, 3-ի (30%) մոտ՝ հասել է նորմայի սահմաններում և 2-ի (20%) մոտ մնացել է անփոփոխ: Ակրոբատիկական վարժութիւններով պարապմունքների ընթացքում, ակնաբուժի եզրակացութիւնով ներակնային ճնշման ցուցանիշներում տեղի ունեցող փոփոխութիւնները գտնվում էին նորմայի սահմաններում և տատանվում 17-ից մինչ 20 մմ: Այդ ընթացքում աչքի հատակի ոչ մի շեղումներ չեն գրանցվել:

Երկամյա մանկավարժական փորձարարության տարբեր փուլերում՝ փորձարարական և ստուգողական խմբի երեխաների հետ անցկացվել են ֆիզիկական զարգացման, շարժողական ուրտի խանգարումների և տեսողական գործառույթի զարգացման տեսողական ընկալման, տեսողական տեղեկատվություն ստանալու արագության, տեսա-շարժողական կորդինացիայի, տարածության մեջ տեսողական կողմնորոշման ուղղությամբ համակարգված աշխատանքներ: Դրա մասին են վկայում մանկավարժական փորձարարության տարբեր փուլերում փորձարկվողների կատարած ստուգողական աշխատանքների դրական արդյունքները (տրամագիր 1):



- 1 –Տեսողական նյարդի մասնակի ատրոֆիա
- 2 –Թույլ և միջին աստիճանի կարճատեսություն
- 3 –Թույլ և միջին աստիճանի հեռատեսություն

Տր. 1. Փորձարարական ուսուցման տարբեր փուլերում 100 վանդականիչ աղյուսակում պատկերների տեսողական ընկալման համեմատական ցուցանիշները կախված տեսողության խանգարման բնույթից

Տրամագրից պարզ երևում է, որ երկամյա ակորբատիկական պարապմունքները դրական են ազդում թույլ տեսնող երեխաների տեսողության ընկալման զարգացման վրա: Նմանատիպ դրական արդյունքներ են ստացվել նաև այդ երեխաների տեսողական ընկալման արագության, տեսաշարժողական կորդինացիայի, աչքերի և ձեռքերի համաձայնեցված շարժումների և այլ տեսողական գործառույթների վրա:

Մանկավարժական փորձարարության տարբեր փուլերում, ակորբատիկական վարժությունների կատարման ընթացքում ուսումնասիրվել են թույլ տեսնող դպրոցականների ֆիզիկական զարգացման /հասակի, քաշի, կրծքի շրջագծի, սպիրոմետրի և դինամոմետրի ցուցանիշներ/, շարժողական ուրտի ձեռք բերած կարողությունների և ընդունակությունների ցուցանիշներում տեղի ունեցող փոփոխությունը: Արդյունքները համադրվել են ինչպես մինչ փորձարարական տվյալների հետ, այնպես էլ ստուգողական խմբի փորձարկվողների ցուցանիշների հետ (11 մասնակից):

Մինչ փորձարարության տվյալները վկայում են, որ 2 խմբի փորձարկվողներն ունեցել են ֆիզիկական զարգացման և շարժողական ընդունակությունների ցածր ցուցանիշներ համեմատած նորմալ տեսնող հասակակիցների հետ: Այսպես հասակի մեջ հետ մնալը միջինում կազմում է

2.4 սմ, քաշը՝ 1.9 կգ, կրծքի շրջագիծը՝ 4.3 սմ, սպիրոմետրայի մեջ՝ 610.5լ, ձեռքի դինամոմետրիան՝ 6.3 կգ (աջ) և 6.1 կգ (ձախ): Ֆիզիկական զարգացման այս ցուցանիշները 2 տարիների ընթացքում ակրոբատիկական վարժություններով պարբերական կազմակերպված պարապմունքների շնորհիվ բավականին բարելավվել են: Հասակի և քաշի ցուցանիշներում փոփոխությունները եղել են ոչ նշանակալից, ձեռքի դինամոմետրիան, կրծքի շրջագիծը և սպիրոմետրիան լավացել են համապատասխանաբար 14.0 կգ, 6.5 սմ, 1071.5լ: Այս փոփոխությունները ստուգողական խմբում քիչ են արտահայտված:

Փորձարարական աշխատանքների արդյունքների վերլուծությունը մեզ հանգեցրել է այն եզրակացության, որ երկամյա մանկավարժական փորձարարության ընթացքում թույլ տեսնող երեխաների հետ ակրոբատիկական պարապմունքների կազմակերպման և անցկացման մեր կողմից առաջարկվող միջոցները և դրանց կիրառման հատուկ պայմանները նպաստում են ուսումնասիրվող բոլոր ցուցանիշների զարգացմանը: Ակրոբատիկական պարապմունքները նպաստել է նաև թույլ տեսնող երեխաների շարժողական ընդունակությունների մշակմանն ու կատարելագործմանը (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Մանկավարժական փորձարարության տարբեր փուլերում փորձարկվողների շարժողական ընդունակությունների զարգացման ցուցանիշների փոփոխությունները

Շարժողական ընդունակություններ	Փորձ. խումբ n=10 Ստուգ. խումբ n=11	Հետազոտության փուլերը				
		Մինչ փորձ.	6 ամիս հետո	1 տարի հետո	1.5 տարի հետո	2 տարի հետո
		- x	- x	- x	- x	- x
Ճկունություն (թեքում առաջ սմ)	փորձ. խումբ	-12	-6	+2	5	7
	ստուգ. խումբ	-13	-12	-7	-6	-4
Շարժումների արագ. (հպումների հաճախականություն)	փորձ. խումբ	10	12	13	15	18
	ստուգ. խումբ	10	10	12	12	13
Հավասարակշռության պահպանում (վրկ)	փորձ. խումբ	-	4	7	11	17
	ստուգ. խումբ	-	-	2	5	8

Աղյուսակից երևում է, որ մինչ փորձարարությունը, հետազոտվող 2 խմբի փորձարկվողները ունեցել են ճկունության ցածր ցուցանիշներ, ապա առաջին տարվա վերջում փորձարարական խմբում ողնաշարի ճկունությունը

բավականին ավելացել է, իսկ փորձարարության վերջին տարում հասել է զրոյական նիշից 7սմ դեպի ցած, ստուգողական խմբում այն կազմել է -4սմ: Այդպիսի պատկեր է դիտվում նաև շարժումների հաճախականության և հավասարակշռության պահելու կարողության ցուցանիշներում:

Այսպես, եթե մինչ փորձարարությունը 5 վայրկյանում ոտքերի շարժումների հաճախականությունը տեղում վազքի ժամանակ 10 շարժումից հասել է 18-ի (80%), ապա ստուգողական խմբում այն 10 շարժումից փորձարարության վերջում կազմել է 13-ի (30%): Եթե մինչ փորձարարությունը հետազոտվող 2 խմբի փորձարկվողների մոտ նշվել են հավասարակշռության պահպանման շատ ցածր ցուցանիշներ, ապա փորձարարության վերջում փորձարարական խմբի մասնակիցների հավասարակշռության պահպանումը կազմել է 17 վայրկյան արդյունք, իսկ ստուգողական խմբում այն կազմել է 8 վայրկյան:

Թույլ տեսնող դպրոցականների տարածական շարժումների (45°, 90° և 135°) կատարման ճշգրտության ընթացքում թույլ տրված սխալների վերլուծությունը վերջնական փուլում կազմել է 77,7, 61.5 և 63.1 %: Ստուգողական խմբում փոփոխությունները աննշան են 25% (45°), 23.1% (90°) և 16.6% (135°):

Փորձարարության տարբեր փուլերում ակրոբատիկական պարապմունքների ընթացքում անցկացվել է նաև ստուգողական փորձեր ուղղված թույլ տեսնող երեխաների մարզական կատարելագործման բացահայտմանը: Գնահատումը կատարվել է ակրոբատիկայում ընդունված 10 միավոր համակարգով (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Մանկավարժական փորձարարության տարբեր փուլերում ակրոբատիկական վարժությունների կատարման ստուգողական փորձարկումների արդյունքները

Վարժությունների խումբ	Վարժություններ	Միավորներով գնահատականը				
		Հետազոտության փուլերը				
		Մինչ փորձը	6 ամիս հետո	1 տարի հետո	1.5 տարի հետո	2 տարի հետո
Գլորումներ	գլորում առաջ	3.0	5.9	7.1	8.4	9.6
	գլորում հետ	2.4	6.4	7.3	8.8	9.2
Գլուխկոնծիներ	գլուխկոնծի առաջ	3.1	7.0	7.8	9.0	9.4
	գլուխկոնծի հետ	0	5.2	6.8	8.5	9.1
Հավասարակշռություն	1 ոտքի վրա հավ.	2.5	6.5	7.9	9.	9.5
	կանգ թիակների	3.0	7.7	8.1	9.0	9.7
Շրջումներ	շրջում կողմ	0	4.7	6.8	7.6	8.8
Զույգային վարժ.-եր	զույգերով վարժ.	0	5.3	6.5	7.9	9.0
Խմբային վարժ.-եր	վարժություն 3-ով, 4-ով	0	4.1	6.6	7.7	9.2
Բուրգեր	Բուրգեր առանց առարկաների	0	4.0	6.1	7.2	8.7

Աղյուսակից երևում է, որ մինչ փորձը ակրոբատիկական տարրերը՝ գլորումները, գլուխկոնծիները, հավասարակշռության պահումը կատարել են

կրպիտ սխալներով՝ ցուցաբերելով ցածր արդյունքներ: 6 ամիս, 1,1,5 և 2 տարի անց, ուսուցանվող վարժությունների կատարման տեխնիկայի գնահատումը աստիճանաբար բարելավվել է մինչև 9.2 միավորի, այսինքն 65.7%:

Ըստ ակրոբատիկական վարժությունների կատարման տեխնիկայի՝ ստուգողական փորձերի արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ թույլ տեսնող դարձականները պարապմունքից պարապմունք կատարելագործել են իրենց ունակություններն ու հմտությունները այդ վարժությունների և առաջադրանքների յուրացման մեջ:

Ստացված տվյալները վկայում են նաև այն մասին, որ ակրոբատիկական վարժությունները (կանգ թիակներին, կիսալարաններ, «ծիծեռնակ», զույգային և խմբային վարժությունները) նպաստում են հավասարակշռության զարգացմանը և վետիբուլյար ապարատի գործունեության կատարելագործմանը և դրական ազդեցություն են թողնում թույլ տեսնող երեխաների շարժումների հստակության և կոորդինացիայի զարգացման վրա:

Այսպիսով, մանկավարժական երկամյա փորձարարության արդյունքները թույլ են տալիս հավաստիացնել, որ ակրոբատիկական պարապմունքների համար առաջարկվող մոտեցումները թույլ տեսնող երեխաների ֆիզիկական պատրաստվածության, շարժողական ընդունակությունների զարգացման, տեսողական գործառույթների և մարզական կատարելագործման հարցում ունեն դրական ազդեցություն:

Սա հաստատում է կազմակերպվող ակրոբատիկական արտադասարանական պարապմունքների ընձեռած հանրավորությունները և արդյունավետությունը:

ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն հիմնախնդրի ուսումնասիրումը և վերլուծությունը թույլ տվեցին կատարել հետևյալ եզրակացությունները.

1. Ակրոբատիկական վարժությունները տեսողության խանգարումներ ունեցող երեխաների ֆիզիկական դաստիարակության կարևոր միջոց են, սակայն թույլ տեսնող երեխաների հետ սույն վարժությունների միջոցով կազմակերպվող պարապմունքների հնարավորությունների անբավարար ուսումնասիրության պատճառով ակրոբատիկական միջոցների ներդրումը ֆիզիկական դաստիարակության համակարգ դժվարանում է: Դրա համար էլ ակրոբատիկական վարժություններով պարապմունքների ազդեցության ուսումնասիրությունը թույլ տեսնող երեխաների տեսողության վրա արդիական է, ունի տեսական, գործնական և սոցիալապես կարևոր նշանակություն:

2. Սոցիոլոգիական հետազոտմամբ հաստատված է, որ հարցմանը մասնակից մասնագետների զերակշիռ մասը ակրոբատիկական վարժությունները համարում են տեսողության խանգարումներ ունեցող երեխաների ֆիզիկական դաստիարակության կարևոր միջոց: Այդուհանդերձ՝ հարցմանը մասնակից ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչներից 85, 2%-ը և ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի բարձր կուրսի ուսանողներից 90,4 %-ը /ապագա ուսուցիչներ/ անկեղծորեն մշել են թույլ տեսնող երեխաների հետ ակրոբատիկական վարժություններով պարապմունքների հնարավորությունների

և նպատակաուղղվածության հարցերի, ակրոբատիկական պարապմունքների դասարանական և արտադասարանական ձևերում առանձին տարրերի ու վարժությունների ներառման վերաբերյալ իրենց իրազեկման ցածր մակարդակի մասին: Սույն հետազոտության արդյունքները վկայում են նաև թույլ տեսնող երեխաների տեսողության վրա ակրոբատիկական պարապմունքների թողած դրական ազդեցության մասին:

3. Հաստատված է, որ երկամյա մանկավարժական փորձարարության ընթացքում մեր կողմից առաջարկված անհատական և զույգային վարժությունները, բուրգերի կիրառումը նպաստել են ուսումնասիրվող բոլոր ցուցանիշներում դրական արդյունքների գրանցմանը՝

- Ակնաբույժի եզրակացության համաձայն հաստատվել է, որ փորձարարական խմբի 10 փորձարկվողների 6-ի /60%/ կենտրոնական տեսողության սրությունը մնացել է անփոփոխ, իսկ 4-ի /40%/ մոտ նկատվել է աննշան լավացում: Ծայրամասային տեսողության ուսումնասիրության ցուցանիշներում երեխաներից 4-ի մոտ նկատվել է տեսողական դաշտի սահմանների լայնացում 5-10 °-ով, 3-ի մոտ այն հասել է նորմայի, և միայն 2 երեխայի տեսողական դաշտի սահմանների փոփոխությունը համեմատած մինչ փորձարարության տվյալների մնացել է անփոփոխ: Թույլ տեսնող դպրոցականների նեակմային ճնշման և աչքի հատակի բացասական փոփոխություններ ակրոբատիկական վարժություններով պարապմունքների ընթացքում չեն նկատվել:

- Ակրոբատիկական վարժություններով պարապմունքները նպաստում են թույլ տեսնող դպրոցականների տեսողական մի շարք գործառնությունների զարգացմանը՝ տեսողական ընկալում, տեսողական տեղեկության ստացման արագություն և ճշգրտություն, տեսաշարժողական կոորդինացիա, աչքերի և ձեռքերի շարժումների համաձայնեցում:

- Թույլ տեսնող երեխաների հետ ակրոբատիկական վարժություններով երկամյա պարապմունքների ընթացքում դրական արդյունքներ նկատվել են նաև ֆիզիկական զարգացման /կրծքի շրջագիծ, դիմամոմետրիա, սպիտոմոտրիա/ և շարժողական ընդունակությունների /ճկունություն, արագաշարժություն, հավասարակշռության պահպանում, շարժումների կոորդինացիա և ճշգրտություն/ ցուցանիշներում: Այս ամենը նրանց թույլ է տվել հաջող յուրացնել ակրոբատիկական վարժությունների մի շարք տեխնիկաներ, ազատ, զեղեցիկ և գրեթե առանց սխալների կատարել բարդ կոորդինացիա և ճշգրտություն պահանջող առանձին տարրեր և վարժություններ:

4. Անցկացված հետազոտության արդյունքները փաստում են թույլ տեսնող երեխաների հետ ակրոբատիկական վարժություններով անցկացվող պարապմունքների դրական ազդեցությունը տեսողական վիճակի, տեսողական գործառնությունների, շարժողական ուղրտի զարգացման, բարդ կոորդինացիա և ճշգրտություն պահանջող առանձին տարրերի և վարժությունների յուրացման վրա:

Վերոնշյալը փաստում է այդ երեխաների հետ անցկացվող ակրոբատիկական պարապմունքներում առաջարկված միջոցների և պայմանների ներառման հնարավորությունները և նպատակաուղղվածությունը:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է հեղինակի հրատարակված հետևյալ աշխատանքներում.

1. Ղարիբյան Գ.Գ. Ակրորատիկական պարապմունքների ազդեցությունը թույլ տեսնող դպրոցականների շարժողական շեղումների ֆունկցիաների շտկման վրա: Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի երիտասարդ գիտնականների աշխատանքների ժողովածու: Երևան, 2004, էջ 16-17:

2. Ղարիբյան Գ.Գ. Ակրորատիկական պարապմունքների ազդեցությունը թույլ տեսնող երեխաների շարժողական ֆունկցիաների շեղումների շտկման վրա: ՖԿՂԻ-ի հանրապետական 37-րդ գիտամեթոդական կոնֆերանսի նյութեր: Երևան, 2010, էջ 171-175:

3. Гарубян Г.Г. Азарян Р.Н. Занятия акробатическими упражнениями как важное средство коррекции и недостатков физического развития у слабовидящих школьников. // Педагогическаямысль, Ереван, 2011, N1-2, стр. 227-233:

4. Ղարիբյան Գ.Գ. Ակրորատիկական վարժությունները տեսողական խանգարումով երեխաների ֆիզիկական դաստիարակության համակարգում: Մեթոդական ձեռնարկ, Երևան, 2011, 52 էջ:

5. Ղարիբյան Գ.Գ. Թույլ տեսնող կրտսեր դպրոցականների արտադասարանական պարապմունքներում ներառված ակրորատիկական վարժությունների բովանդակությունը: ՖԿՂԻ-ի Հանրապետական XI գիտամեթոդական կոնֆերանսի նյութեր, Երևան, 2013, էջ 201-205

Гарибян Гоар Геворковна

Влияние акробатических занятий на состояние зрительных функций у слабовидящих детей

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02-“Методика преподавания и воспитания”
(физическая культура)

Защита состоится 12 марта 2015г. в 12⁰⁰ часов на заседании специализированного совета 020 ВАК “Педагогика” по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу: 0010, Ереван, ул. Тиграна Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Известно, что потеря или нарушение зрения в детском возрасте приводит к появлению вторичных отклонений в психофизическом развитии этих детей. Для коррекции этих нарушений и всестороннего развития слабовидящих школьников широко используются разнообразные средства физического воспитания. Однако до настоящего времени в научно-методической литературе и на практике не определены роль и место акробатических упражнений в системе физического воспитания слабовидящих школьников, не изучено влияние акробатических занятий на состояние зрительных функций этих детей, теоретически и экспериментально не обоснована возможность и целесообразность занятий этими видами физических упражнений со слабовидящими детьми. Разработка этих вопросов будет способствовать совершенствованию физического воспитания этих детей, что и определяет проблему исследования как весьма актуальную, теоретически, практически и социально значимую.

Цель исследования - изучить влияние занятий акробатическими упражнениями на состояние зрения слабовидящих младших школьников.

Задачи исследования

1. Изучить современные подходы к организации проведению акробатических занятий со слабовидящими детьми.
2. Изучить влияние занятий акробатическими упражнениями на состояние зрения слабовидящих младших школьников.
3. Экспериментально обосновать возможность и целесообразность занятий акробатическими упражнениями со слабовидящими школьниками.

Научная новизна исследования состоит:

- В экспериментальном изучении влияния занятий акробатическими упражнениями на состояние зрения слабовидящих учащихся.
- В разработке средств, методов и условий применения акробатических упражнений на занятиях физической культуры со слабовидящими младшими школьниками.
- В экспериментальном обосновании возможности и целесообразности занятий акробатическими упражнениями со слабовидящими школьниками.

Теоретическая значимость исследования заключается в теоретическом обосновании эффективности применения акробатических упражнений на состояние зрения, развитие физической подготовленности и двигательной сферы слабовидящих младших школьников, а также полученных результатов исследования.

Материалы диссертационного исследования в определенной степени дополняют новыми сведениями теорию и методику физического воспитания детей с нарушениями зрения.

Практическая значимость исследования определяется экспериментальным изучением влияния занятий акробатическими упражнениями на состояние зрительных функций слабовидящих детей, а также в разработке и внедрении в практику физического воспитания этих детей средств, методов и условий применения акробатических упражнений на занятиях физической культуры.

Апробация результатов исследования. Основные положения, результаты и выводы докладывались и обсуждались на научных конференциях, заседаниях кафедры гимнастики и спортивных танцев, адаптивной физической культуры АрмГИФК (2003-2011гг) и кафедре специальной педагогики и психологии АГПУ им. Х. Абовяна (2014г), а также на заседаниях педагогического совета специальной школы для детей с нарушением зрения N 14 г. Еревана (2008-2011гг). По теме диссертации опубликовано 5 статей.

Структура и объем диссертации. Диссертационная работа изложена на 185 страницах компьютерного текста и состоит из введения, трех глав, выводов, списка использованной литературы и приложения. Текст диссертации содержит 11 таблиц, 18 рисунков и 8 приложений.

Gohar Gharibyan

**INFLUENCE OF ACROBATIC LESSONS ON THE CONDITION
OF THE VISUAL FUNCTION OF CHILDREN WITH POOR VISION**

Thesis for the degree of candidate of Pedagogical Sciences, speciality 13.0002- “Methods of Teaching and Education” (Physical Training)

The defense of the thesis will be held at 12 a.m. on 12 March, 2015, at the sessions of Special Board 020 HAC (Higher Attestation Commission) to award degrees under Kh.Abovyan Armenian State Pedagogical University, address: 0010, Tigran Mets avenu. 17, Yerevan

SUMMARY

The relevance of the research.

It is known that loss or impairment of eyesight in childhood bring to secondary deviations of psychophysical development of these children. For correction of these impairments and comprehensive development of school children with poor vision different means of physical development are widely used. However, up to date the role and place of acrobatic exercises for physical development of school children are not defined, the influence of acrobatic lessons on the condition of visual functions of these children is not studied in the scientific-methodical literature and practice. The possibility and appropriateness of these lessons for children with visual impairments are not justified. Elaboration of these issues will promote the improvement of physical development of these children. This defines the issue of the research as very relevant which has theoretical, practical and social importance.

The aim of the research is to study the influence of acrobatic exercises on the condition of visual functions of children with poor eyesight.

The objectives of the research are:

1. To study the contemporary approaches to organize and conduct acrobatic lessons with children with poor vision.
2. To study influence of acrobatic exercises in school curriculum on the condition of visual functions of children with poor vision.
3. To justify the possibility and appropriateness of acrobatic exercises for children with visual impairments experimentally.

The scientific novelty of the research is:

- the experimental study of influence of school curriculum acrobatic exercises on the situation of visual functions of children with poor vision;
- the development of methods, strategies and conditions of use of acrobatic exercises during lessons of physical training with primary school children;
- the experimental justification of possibility and appropriateness of lessons with acrobatic exercises for children with poor vision.

The theoretical relevance of the research is the theoretical justification of the efficiency of use of acrobatic exercises for the eyesight condition, physical preparedness and locomotor functions of children with poor eyesight and the obtained results of the research.

The materials of the research, to some extent, complement with new data the theory and methods of physical development of children with visual impairments.

The practical significance of the research is defined by experimental study of influence of acrobatic exercises on the condition of visual functions of children with poor vision, as well as the development and implementation in practice of the strategies, methods and conditions of use of acrobatic exercises during lessons of physical training.

Approbation of the results of the research. The main provisions, results and conclusion have been reported and discussed at academic conferences, meetings of the Chair of Gymnastics and Sport Dancing, the Chair of Adaptive Physical Training, ASIPhT (2003-2011), the Chair of Special Pedagogy and Psychology, Kh.Abovyan ASPU (2014), and at the meetings of pedagogical board of special school for children with visual impairments N14 in Yerevan (2008-2014). On the thesis issue 5 articles have been published.

The structure of the thesis dissertation. The dissertation is written on 185 pages of computer text and consists of an introduction, three chapters, conclusions, list of literature used and appendix. The text of dissertation contains 11 tables, 18 pictures and 8 appendices